

## «ՆԱՐԵԿԻ» ԷՍՏՈՆԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆ\*

**Քանալի բառեր** – Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», էստոններեն, թարգմանություն, գրական կապեր, Պետտեր Վոլկոնսկի, գրախոսություն, շնորհանդես:



Պետտեր Վոլկոնսկի

2017 թվականը արգասաբեր էր նարեկացիագիտության համար: Լատվիայի մայրաքաղաք Ռիգայում տպագրվեց Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» գրքի լատիշերեն տարբերակը (թարգմանիչ՝ Վալդա Սալմինա): Բազմամյա ստեղծագործական ու նախապատրաստական ընթացքից հետո Տալլինում տպագրվեց անմահ «Մատեանի» էստոններեն թարգմանությունը<sup>1</sup>:

Վերջինի մասին է լինելու մեր խոսքը, անմիջապես ասենք՝ հիացական խոսքը թե՛ թարգմանության և թե՛ հեղինակի՝ մեր գնահատմամբ գրական սխրանքի մասին: Քանզի ինչ կարող է առավել բերկրալի լինել հայկական մեծ մշակույթի համար, քան այն այլ լեզուներով հնչեցնելը, սփռման շրջանակները լայնացնելը: Իսկ երբ խոսքը անմահ «Նարեկի» թարգմանության մասին է, ապա գործ ունենք տիեզերական սուրբ հանճարի գրական ու միաժամանակ հոգևոր գանձերը սփռելու հետ: Խոնարհաբար կատարված ենք տեսնում Գրիգոր Նարեկացու «Մատեանի» տողերում թաքնված պատգամը:

**Զօրհնեալ քո խրթանցդ գաշխարհաստեղծ բերանոյդ  
Զաստուածողէն անձրևացդ գկեցուցանողդ կաթուած  
Մատո՛ լսելեացս դրանց բացարան (Քան ԼԳ, գ):**

Էստոններեն թարգմանության հեղինակը էստոնական մշակութային, երաժշտական և բանաստեղծական շրջանակներին քաջ հայտնի մտավորական **Պետտեր Վոլկոնսկին** է:

<sup>1</sup>Ընդունվել է տպագրության 25.07.2018:

1 Տե՛ս **Nareki Grigor**, Nutulaulude raamat, Vanaarameenia keelest tõlkinud ja kommenteerinud Peeter Volkonski (Eessõna), Tallinna Ülikooli Kirjastus, Tallinn, 2017, 227 էջ:

**Նախ՝ կենսագրական հակիրճ փյախներ թարգմանչի մասին<sup>2</sup>: Պետեր Անդրեի Վոլկոնսկին ծնվել է 1954 թ. Տալլինում: Հայրը՝ Միխայիլ Վոլկոնսկին (1933–2008 թթ.) Ռուսաստանի անվանի իշխանական փան շառավիղներից էր: Պետերը մյերիմների շրջանակում երբեմն հիշում է իր նախնիներին, որ իր դեպքում սոսկ ծագումը ցույց փոխ ընթացում չէ, այլ արյամբ, ներքին էությունը պայմանավորված ազնիվ և ոչ սքանդալար վարքագիծ, որ, համաձայնեք, ոչ հաճախադեպ իրողություն է մեր օրերի համար: Վոլկոնսկիների մեջ առավել ցայտուն կերպար է 1812 թ. Ռուսաստանի հայրենական պատերազմի հերոս, դեկաբրիստական շարժման ղեկավարներից՝ գեներալ Սերգեյ Վոլկոնսկին: Պետերի մայրը՝ Հելվի Յորիստոնը (ծնվ. 1928 թ.), էսպոնացի բանաստեղծուհի է: Պետերը Վոլկոնսկին 1972–1976 թթ. ուսանել է Տալլինի կոնսերվատորիայում, 1976 թվականից աշխատանքային գործունեություն ծավալել որպես ռեժիսոր, երաժիշտ, կոմպոզիտոր, 1978 թ. ընկերների հետ հիմնադրել է «Propeller» ռոք երաժշտախումբը, որ արտառոց մի բան կարող էր դիպվել խորհրդային փարիների համար և որին հասնելու համար անհրաժեշտ էր հաղթահարել մանր ու մեծ խոչընդոտներ: Դա որոշակիորեն ցույց է փայլիս Պետերի խառնվածքի ու մրաօնողության բնույթը, հեղափոխությունների շրջանակը: Նրա արեղծագործական ուղու նշանավոր մի էջ է 1990 թվականը: Այդ փարի Պետերը ներկայացրել է «Էսպոնիայի սպրկափրական կուսակցություն» երաժշտական մեծ ծրագիրը, որի ինկրովիզիացիոն ներկայացումը փրկել է ունեցել Տարբու քաղաքում<sup>3</sup>, որ այդ ժամանակ բնակվում էր Պետերը: Ստեղծագործական արգասիքներից հիշարկելի են Պ. Վոլկոնսկու «Իմ բոլոր Լենինները» լիամետրաժ գեղարվեստական ֆիլմը (1997 թ.), որ Պետերը միաժամանակ խաղացել է հեղափոխական Գրիգորի Զինովի դերը, «Սիրո կարմիր մարգարիտ» մեյդրաման (2007 թ.), «Մարիան Բունոս Արեսից» փանգո-օպերան, որի ռեժիսորը Պետեր Վոլկոնսկին է: Նրա հեղինակած հայրնի երգերից է Die Woche-ն: 2009 թվականին Տալլինում լոյս փռսավ Պետեր Վոլկոնսկու բանաստեղծությունների և հուշերի ժողովածուն:**

Մշակութային ու հասարակական բուռն և ակտիվ ընթացքների կիզակետում գտնվող հեղինակի հետ մեր ծանոթությունը եղավ 2013 թվականին: Երևանի պետական համալսարանի ընկերներից զանգ են ստանում, որ Երևան է ժամանել հին հայերենով և «Մատենի» թարգմանությամբ զբաղվող էստոնացի մասնագետ, որ խորհրդատվության կարիք ունի հատկապես գրաբարի հարցերում: Բնականաբար համաձայնում են, մտովի ուրախանում, որ արտերկրում կան նման հարցերով հետաքրքրված անշահախնդիր անհատներ, որոնք ջանքեր են գործադրում հայ մշակույթին ի նպաստ: Առաջին հանդիպում ենք նշանակում Մատենադարանում, այն մտքով, որ անհրաժեշտ գրականությունից հենց այնտեղ կարող ենք ազատ օգտվել, եթե հարկը պահանջի, նաև ձեռագրեր պատվիրել ու թերթել: Եվ այդտեղ տեղի է ունենում մեր ու Պետերի առաջին ծանոթությունը: Բարձրահասակ ու նիհարվուն մի մարդ է՝ պատկառելի մորուքով, 60-ին մոտ, եվրոպական

<sup>2</sup> Պետեր Վոլկոնսկու մասին կենսագրական հավելյալ տվյալներ կարելի է քաղել համացանցի [https://ru.wikipedia.org/wiki/Волконский,\\_Петер\\_Андреевич](https://ru.wikipedia.org/wiki/Волконский,_Петер_Андреевич) կայքից:  
<sup>3</sup> Տարտուն հայ իրականության մեջ քաջ հայտնի Դորպատոն է, որի համալսարանը հիմնադրվել է 1632 թ., և որտեղ ժամանակին ուսանել են նաև հայ երիտասարդները, այդ թվում՝ Խաչատուր Աբովյանը (1830–1835 թթ.), Ստեփանոս Նազարյանցը, Ռաֆայել Պատկանյանը, Հակոբ Մանանդյանը:

վարվելաձևով ու մանավանդ մտքի ճկունությամբ, ակնոց կրող սևեռուն ու լայն հայացքով, որ երկար կարող է նայել մի կետի և այդ պահին խորհել ինչ-ինչ հարցերի մասին: Հագուստը բնավ շռայլ չէ, հաստատ այն պատճառով, որ դա ամենից կարևոր բանը չէ Պեետերի համար: Գլխին մշտապես կրում է ազգային տարազի գլխարկը, որ շատ նման է մեր կապերտե գլխանոցին: Երիտասարդ տարիներին մի հիվանդություն կրելու պատճառով ոտքերի հողացավ է ստացել և քայլում է դանդաղ, ոտքերը չծալելով և անպայման ձեռնափայտով, իսկ աստիճանները բարձրանում և իջնում է ոչ առանց օգնության:

Մատենադարանում կարճատև մի գրույցից հետո ուղևորվում ենք Երևանի կենտրոնում էստոնացի իր դիվանագետ ընկերների ժամանակավոր տրամադրած բնակարանը, ուր սեղանին պատրաստ ու պարզապես սփռված էին «Մատենի», Նարեկացու մասին հիմնարար գրքեր, թղթեր, որ ցույց էր տալիս դրանցից օգտվողի՝ հենց նոր աշխատանքը դադարած լինելը:

Անմիջապես պետք է ասեմ, որ Պեետերը արդի հայերենին տիրապետում է քիչ, կարողանում է միայն կենցաղային ամենակարևոր արտահայտություններով հաղորդակցվել և, օրինակ, մինչ օրս կանոնավորապես բարևում, ցտեսություն և նման բառերն ասում է միայն հայերենով: Շատ է հավանում «բարև» բառը, որ և՛ գեղեցիկ ու բարեհունչ է, և՛ մեծ իմաստային տարողություն ունի իր համար: Մեր շփումը ռուսերեն է, տեղ-տեղ միայն՝ անգլերեն: Նաև ասենք, որ գրաբարին, որը մեր ծանոթության սկզբնապատճառը եղավ ու հետագա շփումների հիմնական թեման, տիրապետում է ընթերցելու և բառարանների միջոցով ինչ-ինչ հատվածներ հասկանալի դարձնելու չափ միայն: Իսկ ինչպես է թարգմանում Նարեկը, կհարցնի ընթերցողը, հենց դրան է նախ և առաջ նվիրված մեր այս հրապարակումը, և այդ հարցի պատասխանը կփորձենք տալ քիչ հետո:

Հայ մշակույթին, միջնադարյան գրականությանն ու առավել ևս Գր. Նարեկացուն Պեետերի կապվելու պատմությունը երեք տասնամյակի վաղեմություն ու նախապատմություն ունի: Մեր հանդիպումների ընթացքում ու հետագա գրույցներում բազմիցս ենք փորձել այդ շարժառիթները պարզել գոնե մեզ համար: Պեետերն այդ թեմաներով բնավ առատախոս չէ, կտրուկ մեկ-երկու արձագանք է տալիս միայն և խոսքը փոխում: Բայց այդուհանդերձ հասցրել ենք մի քանի գրառումներ անել, որոնց միջոցով այժմ փորձում ենք ի մի բերել, թե ինչ կերպ սկսեց, ինչը դրդեց, ինչու ձեռնարկեց Գրիգոր Նարեկացու երկի թարգմանությունը:

Այդպես, ուրեմն 1970-ական թվականների երկրորդ կեսին Պեետերն ուսանելիս է լինում թատերական ինստիտուտի վերջին կուրսում, միաժամանակ կոմպոզիտոր և երաժշտագետ Լեո Նորմետի հետ աշխատում է «Աշխարհի ժողովուրդները երաժշտության մեջ» ռադիոժրագրի պատրաստման վրա: Պեետերի խնդիրն էր՝ հայտնաբերել և էստոներեն թարգմանել տարբեր ժողովուրդների ստեղծագործությունները: «Երբ հերթը հասավ Հայաստանին, - բառացի մեջբերում ենք Պեետերի պատմածից, - ես գտա Նարեկը, կանգ առա նրա վրա, առաջին թարգմանության փորձերն արեցի ինձ համար, իհարկե՝ սկզբում Նաում Գրեբնևի ռուսերեն թարգմանության միջնորդությամբ, որ իմ ձեռքին կար այդ ժամանակ: Բայց անմիջապես ինչ-որ

անմեկնելի, զարմանալի նոր զգացողություններ ունեցա. այդ ինչպե՞ս է 10-րդ դարի հայ հոգևորականը ստեղծագործել «smile emoticon» (Պ. Վոլկոնսկու տերմինային բնութագիրն է – Ն. Պ.) տաղաչափական ձևով: Ավելի ուշ, երբ եղա Երևանում, փնտրեցի և գտա Մանուկ Աբեղյանի «Հայ գրականության պատմություն» գիրքը՝ ինձ հուզող հարցի պատասխանն այնտեղ գտնելու հույսով»:

«Իսկ էրբ ես առաջին անգամ եղել Երևանում»,– հարցնում ենք մենք: Մի փոքր հապաղելուց հետո պատասխանում է. «Նայեցի Մանուկ Աբեղյանի գիրքը, վրան նշում ունեմ, որ այն գնել եմ 1977 թվականին, ուրեմն այդ ժամանակ էլ եղել եմ Երևանում, այսինքն՝ արդեն 30 տարի ունեմ իմ թիկունքում Նարեկով զբաղվելու համար»: Տանը՝ Տարտուում, ունի հայերեն գրականություն, այդ թվում՝ «Մասնա ծռեր» էպոսի մի հրատարակություն, Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի», Հրանտ Մաթևոսյանի «Բեռնաձիեր» և բազմաթիվ այլ գրքեր, որ կուտակել է տարբեր առիթներով:

Նախախնամությամբ ու որոշակի առկայծումով, թող մեծահունչ չհամարվի, չնայած որ վստահ ենք դրանում, Պեետերի մեջ լուսավառվում է Նարեկի լույսը, և հետագա տարիները Նարեկը հասկանալու և թարգմանել փորձելու ուղղությամբ անցկացնում է մանրագին աշխատանքներով, միաժամանակ՝ փոքրիշատե հայերենը կատարելագործելով: «Աշխատում էի տքնանքով, Նարեկի գրաբար բնագրից ստուգում և ճշտում էի ամեն մի բառն ու իմաստը, բառարանների միջոցով համեմատում էի հայերենն անգլերենի, ռուսերենի հետ: Գործածում էի Նարեկի անգլերեն<sup>4</sup>, ռուսերեն երկու<sup>5</sup> և ֆրանսերեն ևս երկու թարգմանությունները<sup>6</sup>: Իհարկե, ձեռքիս տակ էին նաև Մկրտիչ Խերանյանի և Վազգեն Գևորգյանի աշխարհաբար թարգմանությունները<sup>7</sup>: Շատ հաճախ էի հայտնաբերում զգալի տարբերություններ այդ թարգմանությունների միջև, որոնք հաղթահարելու համար անհրաժեշտ էր հայերենի ու գրաբարի իմացությամբ մասնագետի խորհրդատվություն, և այդ դեպքում,– շարունակում է Պեետերը,– կապի մեջ էի մտնում իմ ընկեր և օգնական Նորայր Պողոսյանի հետ»:

Պեետեր Վոլկոնսկու նախաձեռնության արդյունավետ ընթացքի համար անփոխարինելի եղավ համացանցային հաղորդակցության դերը: Դրա շնորհիվ աշխատանքը հազարապատիկ արագացավ, բույնների ճշտությամբ պարզաբանելու հնարավորություն բացվեց, Պեետերի հետ պարբերական շփումների միջոցով թարգմանական աշխատանքը հարմոնիզացվեց այն իմաստով, որ արդեն առավել պարզ էր լինում նրա մտքի ընթացքը, հայերենի ու գրաբարի իմաստային նրբությունների միջից պարզաբանում խնդրելու և կողմնորոշվելու նրա մտքի պահանջը: Սովորույթի ուժ էր դարձել երեկոյան սպասել, թե ինչ նոր հարց-նամակ պետք է լինի Պեետերից Նարեկի այս կամ այն «Բան»-ի հատվածի վերաբերյալ: Ապա հարցն ընթերցելիս անցնում էինք իմաստը ընկալելուն, բնագիրը ճշտելուն, մտորելուն, Պեետերի հետ

4 Տե՛ս The Armenian Prayer Book of St. Gregory of Narek, 2005, թարգմ. Թոմ Սամուելյանի:  
 5 Նկատի ունի «Մատենի» ռուսերեն տողացի թարգմանությունը, հեղ.՝ Դարբինյան-Մելիքյան Մ., Խանլարյան Լ., Մոսկվա, 1988, նաև **Нарекаци Г.**, Книга скорбных песнопений (отрывки), Пер. Н. Гребнева, Ереван, «Айастан», 1969:  
 6 «Մատենար» ֆրանսերեն են թարգմանել Սահակ Քեշիշյանը (ուպ. 1961 թ.) և Ժան-Պիեռ Մահեն (2013):  
 7 «Մատենի» մինչև 1985 թ. թարգմանությունների մատենագիտական ցանկը տես Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, աշխատ. Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 225-ից:

խորհրդակցելուն: Քննարկումների բնույթի մասին պատկերացում կարող ենք կազմել՝ մի քանի օրինակներին հետևելով, որոնք քաղել ենք համացանցային պահպանված նամակագրությունից:

«Հասել եմ 43-րդ գլխին և մի խնդրի եմ դեմ հանդիման կանգնել,- մի առիթով գրում է Պետտերը,- Մահեի ֆրանսերեն հրատարակության մեջ կա այսպիսի մի ծանոթագրություն՝ «հայերենում դաշն բառն ունի ոչ միայն «պայմանագիր, միություն» նշանակությունը, այլ նաև «երաժշտական ակորդ», նայել եմ բառարանները, շատ հետաքրքիր իմաստ է ստացվում»:

30.30.2016 թվագրված նամակում Պետտերը նշում է. «Ի հայտ է եկել մի շատ հետաքրքիր խնդիր: 64-րդ գլխի երրորդ հատվածը, ուր մեջքերում է արվում Աստվածաշնչից, այսպես է. «Ցուցեր մարգարէիւն, թէ՛ Զարինուրիւն ստասցի, որ զարիէսս դնէ, Եւ ես համառատել զնոյն փութացայ»: Բայց հարցն այն է, որ Ս. Գրքի ոչ ռուսերեն, ոչ անգլերեն, ոչ էստոներեն թարգմանություններում այդպիսի տողեր չկան: Բայց դա կա «Յոթանասնից»-ի հունարեն բնագրում: Գրաբար Աստվածաշնչում այդ համարը գրված է այնպես, ինչպես Նարեկում է, բայց տարբերվում է հին հունարենից, ուր հնչում է այսպես. «Օրհնում է նա, ով օրենքներ է ստեղծում»: Ուրեմն Նարեկում գրված «համառատել» բառն այս դեպքում նշանակում է, որ իր ժամանակ Գրիգոր Նարեկացին նկատել է բնագրային անհամապատասխանությունը: Դժվար է դատողություն անել Գրիգորի փոխարեն, բայց գրաբար և աշխարհաբար տեքստերում այդ համարների միջև հստակ անհամապատասխանություն կա: Ես որպես թարգմանչի դիտարկում այս մասին կգրեմ տողատակում,- հիշեցնենք՝ սա մի հատված է Պետտերի նամակից:

Մեկ այլ առիթով գրում էր. «Առաջ եմ գնում դանդաղ, բայց քայլում եմ համառորեն: Հասել եմ 52-րդ գլխին և բախվել եմ 4-րդ տողին, ուր «տեսութիւն» բառը տարբեր թարգմանություններում տարբեր իմաստներով է գործածվել, դժվարանում եմ կողմնորոշվել»: Իմ պատասխանը եղավ այսպիսին. «Տեսութիւն բառը գրաբարում, իրոք, մի քանի իմաստ ունի, 1. տեսողություն, 2. ապոկալիպսիս, 3. քննություն, 4. մարգարեություն: Նարեկի 52-րդ գլխի հատվածը՝ («երկայն յուսոյ ամենապատրաստ տեսութիւն, գթած, ողորմած») ես այսպես եմ հասկանում. «հավերժական (երկարատև) հույսի լիովին պատրաստ սպասումը...»: «Ուրեմն այնուամենայնիվ՝ սպասում»: «Այո, կարծում եմ՝ այդպես է»: «Դա հրաշալի է,- ոգևորությունը սովորականի նման չի թաքցնում Պետտերը,- դա խիստ գեղեցիկ կերպով համապատասխանում է էստոներենին, քանի որ մեր լեզվում «հույս» հնչում է lootus, իսկ «սպասում»՝ ootus: Հիմա ես պարզապես կնստեմ և կսպասեմ, մինչև այդ հասկացությունները սառչեն որպես համեղ թեյ, և դրանք կհավելն լեզվական եռացող ջրին»:

Ահա մոտավորապես այսպիսին է եղել Պետտեր Վոլկոնսկու աշխատանքային արվեստանոցը «Նարեկը» թարգմանելիս: Ասենք նաև, որ Հայաստանում եղած ժամանակ, հատկապես երկրորդ այցելության ընթացքում Պետտերի հանգրվանած բնակարանում՝ Սարյան փողոցի վրա, որ կրկին իր ընկերներն էին հոգացել, հասցրինք թերթել գրեթե ողջ «Նարեկը» որոշ համեմատություններով հանդերձ (հիացնում էր որոշ բացահայտումների դեպքում Պետտերի հայացքի անմիջապես բոցավառումը, ոգևորության թռիչ-

քր), բանավոր թարգմանեցինք «Նարեկի» գիտաքննական հրատարակության ծանոթագրությունները՝ հարյուրավոր էջերով և իմաստային ինչ-ինչ նկատառումներով: 2013 թ. Հայաստան կատարած իր այցի ընթացքում Պետտեր Վոլկոնսկին հանդիպում ունեցավ նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնում. Գևորգյան հոգևոր ձեռնարանի սաների հետ հանդիպումը կազմակերպվել էր Կոմիտասյան դահլիճում:

Մի փոքրիկ հրաշքի տեսարան է պատահել այս ընթացքում անձամբ Պետտերի հետ, որ ներկայացնում են այստեղ առանձնակի սիրով: Ընդ որում այդ մասին պատմել է ինձ՝ մինչ այդ որևէ մեկի հետ կիսված չլինելով, ինչպես ինքը՝ Պետտերն է հավաստում: 2015 թվականի դեկտեմբերին հիվանդանոցում պառկած է եղել ոտքերի չարաբաստիկ հիվանդությամբ, և անհրաժեշտ է եղել վիրահատություն կատարել: Դեկտեմբերի 16-ին պետք է երկարատև վիրահատությունը սկսվեր, որի դրական արդյունքը քիչ էր երաշխավորվում, իսկ հակառակ դեպքում Պետտերը դառնալու էր անդամալուծ: «Երբ արդեն պառկած էի սեղանին, թմրեցնող բժիշկը հորդորեց՝ հիմա արդեն մտածիր ինչ-որ դրական բաների մասին: Եվ իմ վերջին միտքը հետևյալն էր. «Գրիգոր, սիրելիս, մի փոքր աղոթք արա ինձ համար»: Եվ ուղիղ վեց Ժամ հետո ինձ արթնացրին, ամեն ինչ անցել էր շատ բարեհաջող...»:

Մի նոր արդյունք է տվել «Նարեկի» թարգմանությունը էստոնացիների համար: Ինչպես Պետտերն է վստահեցնում, «տարօրինակ թող չթվա, բայց թարգմանության ընթացքում պեղում էի վաղուց սոռակաված էստոներեն բառեր, նորովի շրջանառության մեջ էի դնում, հաճախ նոր բառակապակցություններ ու դարձվածքներ էի ստեղծում, դրանով հարստանում էր էստոներենը»: Շատ հին լեզու չէ էստոներենը, գոնե հայերենի համեմատ, առաջին գրավոր վկայությունները ԺԳ դարից են, իսկ ամբողջական առաջին ձեռագրերը՝ ԺԶ դարից: Եվ Նարեկի «էստոնացումը» մի հրաշալի առիթ է եղել Պետտերի համար բառարաններից ու հին աղբյուրներից պեղելու իր մայրենի լեզվի հին կառույցներ՝ նոր ոճավորում հաղորդելու և շրջանառության մեջ դնելու համար:

Բերում ենք «Նարեկի» առաջին տողերը («Ձայն հառաչանաց հեծութեան սրտի...») էստոներեն թարգմանությամբ՝ ցույց տալու համար, թե ինչպես է հնչում մեր ամենադարման ստեղծագործությունն այդ լեզվով: Լեզուն ճիշտ է, գուցե անհասկանալի է հայ ընթերցողին, սակայն «Մատենան» ու Գրիգոր Նարեկացին կարողանում են մարդկանց հոգիներում սիրո սերմնահատիկներ գցել ու սրտեր միացնել գուցե նաև այդ կերպ.

**Issand, mu isand, helduste jagaja, hea iseeneses,  
Võrdselt kes valitsed kõikide ule,  
Mitte kui millestki kõiksuse looja,  
Hillgusesaras, mõistetamatu, kohutav, hirmutav...**

Եվ ահա սպասված օրը՝ 2017 թ. մարտի 17-ը, երբ Պետտերն ավարտվում է իր թարգմանությունը, դրա ավետիսը տալիս է հետևյալ հակիրճ գրությամբ. «Ահա և վերջ: Գրում եմ վերջին՝ 95-րդ գլխի թարգմանության վերջին բառը՝

Ամեն»։ Դրանից հետո հրատարակչական անհրաժեշտ փուլերով անցնելով և գրախոսական բարձր գնահատական ստանալով՝ «Նարեկի» էստոներեն թարգմանությունը հանձնվում է Տալլինի համալսարանի հրատարակչությանը, որ 2017 թ. վերջին օրերին լույս ընծայեց այն՝ գովելի ձևավորմամբ ու որակով (ի դեպ պետք է ասել, որ հրատարակչության փաստաթղթերով՝ տողերիս հեղինակին վերապահվել է «թարգմանության խորհրդատուի» դերը)։

Ջրույցների ժամանակ փորձեցինք պարզել Պետտերից, թե որքանով են մարդիկ տեղյակ էստոնիայում «Նարեկի» թարգմանության ընթացքի մասին։ «Ձեռն կարող ասել, թե էստոնիայի 1,3 միլիոն բնակիչների քանի տոկոսն այդ մասին գիտի, սակայն ում հետաքրքիր է, անկասկած, տեղյակ է», – ավելի քան գուսպ պատասխան է սա Պետտերի կողմից, քանի որ, նախ՝ մինչ այդ «Նարեկի» էստոներեն մի քանի հատված արդեն տպագրվել էր այդ երկրի ամենից հեղինակավոր «Ակադեմիա» գիտական հանդեսում<sup>8</sup> և շատերը գիտական շրջանակներից արդեն ծանոթ էին։ Եվ հետո՝ թարգմանության տպագրությունից հետո 2018 թ. հունվարի 24-ին Տալլինի համալսարանի հրատարակչությունը էստոնիայի գրողների միության դահլիճում կազմակերպել է շնորհանդես՝ հանդիպում-քննարկում թարգմանչի հետ, որին, ականատեսների վկայությամբ, այնքան մարդ է ներկա եղել, որ բոլոր նստատեղերն ու կանգնելու տեղերը զբաղված են եղել, սակայն մարդկանց հոսքը էլի շարունակվել է և շատերն ուղակի նստել են գետնին։ Գրքի տպագրությունը լուսաբանվել է բազմաթիվ հեռուստատեսությունների և այլ ՋԼՄ-ների միջոցով։ Այդ մասին պատմում է շնորհանդեսի ականատես-մասնակիցը՝ Տալլինի հայ համայնքի ակտիվ անդամներից Գոհար Հովակիմյանը, որի ջանքերով, ի դեպ, գրքի առաջին օրինակներն ուղարկվել են Երևան։

«Ժողովուրդը, իրոք, շատ էր շնորհանդեսի ժամանակ։ Միջանցքից չէին կարողանում առաջ գալ, կանգնած էին, ում որ աթոռներ չբավականացրեց նստելու համար, ուղղակի նստեցին հատակին։ Ներկա էր նաև Մելիսը, որի շնորհիվ Պետտերը 2013-ին կնոջ հետ եկել էր Հայաստան։ Ընթերցեցին հատվածներ էստոներեն «Նարեկից», ամենքը քար կտրած լսում էին։ Նայում էի՝ մարդիկ աչքերը փակ ասես վերացել էին։ Հզոր էր ազդեցությունը»։

Ըստ լուրերի՝ «Նարեկի» էստոներեն տպագրության բոլոր 500 օրինակները հաշված օրերի ընթացքում սպառվել են, որ աննախադեպ է, և հրատարակիչները ներկայումս ձեռնամուխ են եղել երկրորդ խմբաքանակը տպագրելուն։

«Նարեկի» էստոներեն թարգմանությունը գուցե մի ոչ մեծ օրինակ է, թե ինչպես մեր տիեզերական հանձարի՝ Ս. Գրիգոր Նարեկացու «Մատենանը» նախորդ հարյուրամյակների նման այսօր ևս ճառագում և լուսավորում է։ Նա համամարդկային արժեք լինելով՝ մերձեցնում է մարդկանց ու ազգերի սրտերն ու հոգիները, շարունակում ազգերի մեջ հավատքի ու ազգային արժեքների սերմեր սերմանել։

Եվս մեկ հավելում. 2018 թվականի հունիսի կեսերին Երևանում կազմակերպվեց էստոնական մշակույթի «երկօրյակ», համերգով հանդես եկավ Տալլինի սիմֆոնիկ նվագախումբը, եղան այլ միջոցառումներ։ Եվ այդ

<sup>8</sup> Stiu Grigor Narekatsi, Tõlkinud Peeter Volkonski, "Akademia", Tartu, 2013, էջ 1175–1182:

ընթացքում Պեետեր Վոլկոնսկին իր թարգմանության համար արժանացավ ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի:

Նորայր Բ. Պողոսյան  
*Բանաս. գիտ. թեկնածու*

ԼՐԱՏՈՒ

**Նորայր Բ. Պողոսյան** – Զբաղվում է հայերենի պատմության, գրաբարի, հայ բարբառների ուսումնասիրության հարցերով, ունի 10 մենագրություն և 60-ից ավելի հրապարակումներ, ղեկավարում է «Հայերենի աջակիցների ոսկեղենիկ միավորում»-ը:

## Summary

### THE WAY OF THE TRANSLATION OF “NAREK” INTO ESTONIAN LANGUAGE

Norayr B. Poghosyan

**Key words** – Gregory of Narek, “Book of Lamentations”, Estonian, translation, literary ties, Peeter Volkonski, critical review, presentation.

In 2017 the Estonian translation of the “Book of Lamentations” by Gregory of Narek was published. The author–translator is Peeter Volkonski who is known as ascholar, musician, film director and poet. He started the translation of the poem when he was still a youth. But he seriously concentrated on the translation work during the last 5–6 years. He started the translation using not only the ashkharabar/new Armenian version of the book but also the English, French, Russian translations. All the way through Mr. Volkonski put the Grabar /Old Armenian version of the original book in the basis of his translation. P. Volkonski is successful in his efforts to transfer the content, poeticalness and rhyme of Narek into Estonian language. The literary circles highly evaluated the effort, and the book was republished twice within the short period of time..

Ժ (ԺԶ) փարի. թիվ 3 (63), հայխ-սեպտեմբեր, 2018

ՎԷՎ համահայկական հանդես



## ПУТЬ ЭСТОНСКОГО ПЕРЕВОДА «НАРЕКА»

Норайр Б. Погосян

**Ключевые слова** – Григор Нарекаци, «Книга скорбных песнопений», эстонский язык, литературные связи, перевод, Пеетер Волконский, обзор, презентация.

В конце 2017 года в Эстонии опубликован эстонский перевод великого произведения Григора Нарекаци «Книга скорбных песнопений». Перевод осуществил известный в Эстонии поэт, музыкант, режиссер и истинный интеллигент Пеетер Волконский.

П. Волконский приступил к переводу еще в молодости, но сосредоточенно работал над ним в последние 5–6 лет. В процессе перевода были использованы английский, французский и русский переводы «Нарека», а также переводы на ашхарабар – новоармянский язык, однако в основе эстонского перевода лежит подлинник на грабаре.

В своем переводе П. Волконский смог передать на эстонском языке содержание, поэтичность и ритмику «Нарека». Книга нашла большой отклик в литературной среде Эстонии и за короткое время была переиздана дважды.

### REFERENCES

1. **Nareki Grigor** Nutulaulude raamat, Vanaarmeenia keelest tõlkinud ja kommenteerinud **Peeter Volkonski** (Eessõna), Tallinna Ülikooli Kirjastus, Tallinn, 2017.
2. The Armenian Prayer Book of St. Gregory of Narek, translated by **Tom Samuelian**, 2005.
3. **Grigor Narekaci**, Matean voghbergutean, Yerevan, 1985.
4. **Grigor Narekatsi**, Tõlkinud Peeter Volkonski, «Akademia», Tartu, 2013.